



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՍ



ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻԲՈՎ ԴԵՊՒ ԱՐԺԱՆԱԴԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 2(82), 25 ՄԱՐՏ, 2026թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱՆԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

CEPOL-Ի ՄԵՆԹՈՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԾՐԱՆԱԿՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻ ԱՅՑԸ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱՆԻՐ



Մարտի 24-ին ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) 2025 թվականի «Միգրանտների անօրինական

տեղափոխում» թեմայով մենթորական ծրագրի շրջանակներում ՀՀ ՆԳՆ կրթահամալիր էր այցելել Իտալիայի Հանրապետության պետական ոստիկանու-

թյան կենտրոնական օպերատիվ ծառայության պետի տեղակալ Ռոբերտո Տեզորինո Ֆերոլան ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քրեական ոստիկան, ոստիկանության փոխգնդապետ Ռ. Բադալյանի ուղեկցությամբ: Վերջինս վերոնշյալ մենթորական ծրագրի մասնակիցներից է:

Այցի շրջանակներում հյուրին ընդունեց Կրթահամալիրի ղեկավար Մ. Մուրադյանը: Հանդիպմանը մասնակցում էին Կրթահամալիրի պրոռեկտորներ Մ. Մարկոսյանը և Է. Մարգարյանը, ինչպես նաև Միջազգային համագործակցության և հանրային կապերի բաժնի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին CEPOL-ի մենթորական ծրագրի շրջանակներում իրականացվող համագործակցության ընթացքը, ընդգծեցին փորձի փոխանակման կարևորությունը և դրա դերը իրավա-

պահ համակարգի կարողությունների զարգացման գործում: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց ապօրինի միգրացիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրմանը և դրա տեղայնացման հնարավորություններին:

Ռեկտոր Մ. Մուրադյանը բարձր գնահատեց նմանատիպ ծրագրերի իրականացումը՝ նշելով, որ դրանք կարևոր հարթակ են մասնագիտական կարողությունների զարգացման, միջազգային համագործակցության ընդլայնման և լավագույն փորձի ներդրման համար:

Հանդիպումն անցավ կառուցողական մթնոլորտում՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմամբ:

Այցի ավարտին հյուրի համար կազմակերպվեց շրջայց Կրթահամալիրի տարածքում, ներկայացվեցին ուսումնական ենթակառուցվածքները, մասնագիտացված լսարաններն ու գործնական ուսուցման հնարավորությունները:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱՆԻՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԻ ՀԱՅԱՑՔՈՎ

2026 թվականի մարտի 26-ին ՆԳՆ կրթահամալիրում տեղի ունեցած «Գիտելիք, փորձ և համագործակցություն համուն անվտանգ ապագայի» կարգախոսով միջոցառումն առանձնացավ հետաքրքիր և օգտակար բանախոսությամբ:

Օրվա բանախոսը բազմամյա միջազգային և ազգային փորձով անկախ փորձագետ Աշոտ Սարգսյանը, «Աղետների ռիսկի կառավարման ապագան. գաղափարներ, փորձ և նորարարություն» թեմայի շրջանակներում ներկայացրեց ոլորտի նորարարական մոտեցումները, միջազգային փորձը, հաջողված ծրագրերը և գործնական լուծումները: Մասնակիցները հնարավորություն ունեցան փորձագետի հետ քննարկել ոլորտի արդիական խնդիրները և հարցեր ուղղել բանախոսին:

Մենք խնդրեցինք մեկ ուսանողի հանդիպման վերաբերյալ հակիրճ արձագանքել հարց-պատասխան ձևաչափով: Հարցերն ուղղել ենք Կրթահամալիրի 3-րդ կուրսի սովորող Էմմի Պողոսյանին:

1. Ինչպե՞ս կզննարկեք միջոցառումն ընդհանուր առմամբ. որքանով էր այն հետաքրքիր Ձեզ համար:

Միջոցառումը բավական բարձր են գնահատում, իսկապես հետաքրքիր էր լսել մեր ոլորտում ակնառու հաջողության հասած մասնագետին:

2. Որքանով էր միջոցառման բովանդակությունն օգտակար, ի՞նչ նոր գիտելիքներ կան հմտություններ ձեռք բերեցիք:

Ինձ համար այն բավականին արդյունավետ և օգտակար էր: Բազմաթիվ նշումներ են արել բանախոսությունից, որոնք արդեն հասցրել են դասերի ընթացքում գիտելիքիս հետ համակցելով պատմել և ներկայացնել:

3. Արդյո՞ք միջոցառման ընթացքում արժանիքներ եք ստանալ պատասխաններ տվեցին Ձեզ հուզող հարցերին:

Հարցերի ընտրությունը բավականին լավ էր, քանզի որպես թիրախ վերցված էր ուսանողին հետաքրքիր և արդիական թեմաները: Այո, բանախոսն ինձ տվեց սպառիչ պատասխաններ:

4. Որքանով էք Ձեզ ներգրավված զգացել միջոցառմանը, հնարավորություն ունեցա՞ք արտահայտել ձեր կարծիքը, մասնակցել քննարկումներին:

Այո, բավականին ներգրավված եմ եղել, հնչեցրել եմ և՛ կարծիք, և՛ հարց: Կարծում եմ՝ հենց այսպիսի քննարկումներն են, որ պիտի խթանեն ուսանողներին իրենց հուզող հարցերը բարձրաձայնելու:

5. Ի՞նչ տվեց Ձեզ այս միջոցառումը՝ թե՛ գիտելիքի առումով, թե՛ նորարարությամբ:

Մի քանի հետաքրքրաշարժ փաստեր ամրագրեցի, 1988 թվականի երկրաշարժի, կլիմայական փոփոխությունների, աղետների ռիսկերի կառավարման ոլորտից, որոնք անպայման կկիրառեն, իսկ նորարարության տեսանկյունից հետաքրքիր էր ԱԲ-ի արդյունավետ կիրառումը մեր ոլորտում:



6. Ինչպե՞ս կզննարկեք կազմակերպչական կողմը, ի՞նչը կարելի էր բարելավել:

Կազմակերպչական կողմը շատ լավ էր, միայն կցանկանայի, որ ավելի շատ ուսանողներ ներգրավված լինեն հետագա միջոցառումներին:

7. Ի՞նչ կարծիք ունեք նմանատիպ միջոցառումներ հաճախակի կազմակերպելու անհրաժեշտության վերաբերյալ, ըստ Ձեզ ի՞նչ կտա այն սովորողներին:

Հնարավորություն կտա առերես շփվել ոլորտում հաջողության հասած անձանց, բարձրաձայնել իրենց հուզող հարցերը, ոլորտի ամբողջական պատկերը տեսնել: Նմանատիպ միջոցառումների շարունակականությունը համարում եմ խիստ անհրաժեշտ:

8. Կա՞ն այլ առաջարկներ. Կրթահամալիրում ինչպիսի՞ միջոցառումներ կցանկանայիք, որ հետագայում ևս կազմակերպվեն:

Ես ներգրավված եմ ՆԳՆ Կրթահամալիրի ՈւԻՄ-ում և յուրաքանչյուր կազմակերպվելիք միջոցառումներին կարող եմ աջակցել, կցանկանայի նաև ընդհանուր ՆԳՆ ոլորտի, ոստիկանության ոլորտում իրենց ուրույն դերն ունեցող անձանց բանախոսությունը լսել, շատ կցանկանայի նաև հանդիպել ՆԳՆ նախարար Արփինե Սարգսյանին, պատիվ կլիներ հնչեցնել որոշ հուզող հարցեր:

Ընդհանրապես:
Էմմի Պողոսյան
ԿԱԻ 23 (Կառավարում արտակարգ իրավիճակներում, 3-րդ կուրս)

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԿԱԾ ԿԱՆԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարտի 8-ը՝ Կանանց միջազգային օրը, կարևոր խորհրդանշական առիթ է անդրադառնալու հասարակության տարբեր ոլորտներում աշխատող կանանց ներդրմանը և մասնագիտական գործունեության նշանակությանը: Այս օրը հնարավորություն է տալիս ընդգծել կանանց դերը ոչ միայն սոցիալական և մշակութային կյանքում, այլև այնպիսի բարձր պատասխանատվություն և մասնագիտական պատրաստվածություն պահանջող ոլորտներում, ինչպիսիք են ոստիկանական և փրկարար ծառայությունները:



Գիտական գործունեությունը բնութագրվում է բարձր ռիսկայնությամբ, արագ փոփոխվող իրավիճակներով և պատասխանատվության բարձր աստիճանով: Այս մասնագիտությունների ներկայացուցիչները հաճախ գործում են ճգնաժամային պայմաններում, որտեղ պահանջվում է ոչ միայն ֆիզիկական պատրաստվածություն և մասնագիտական գիտելիքներ, այլև բարձր մակարդակի հոգեբանական կայունություն: Նշված մասնագիտական ոլորտներում արդյունավետ գործունեությունը մեծապես

պայմանավորված է անձի հուզական ինքնակարգավորման և սթրեսի հաղթահարման կարողություններով, իրավիճակային մտածողությամբ և զարգացած հաղորդակցման հմտություններով:

Արտակարգ իրավիճակներում մասնագետների վարքը մեծապես կախված է ոչ միայն իրավիճակի օբյեկտիվ բարդությունից, այլև այն բանից, թե ինչպես է անձը ընկալում և գնահատում այդ իրավիճակը: Եթե մասնագետը կարողանում է իրավիճակը ընկալել որպես լուծում պահանջող խնդիր, ապա նրա վարքային արձագանքները դառնում են ավելի կազմակերպված և արդյունավետ: Այս առումով հոգեբանական պատրաստվածությունը կարևոր գործոն է, որը թույլ է տալիս պահպանել ներքին հավասարակշռությունը և կայացնել նպատակահարմար որոշումներ նույնիսկ բարձր լարվածության պայմաններում:

Իրավապահ և փրկարար ծառայությունների գործունեության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի նաև հուզական ինտելեկտը: Հուզական ինտելեկտը մարդու այն կարողությունն է, որը հնարավորություն է տալիս ճանաչել և հասկանալ սեփական և այլ մարդկանց հույզերը, ինչպես նաև կառավարել դրանք տարբեր իրավիճակներում: Գնաժամային իրավիճակներում աշխատող մասնագետների համար այս կարողությունը հատկապես կարևոր է,

քանի որ նրանք հաճախ շփվում են սթրեսային կամ տրավմատիկ իրավիճակներում գտնվող քաղաքացիների հետ: Նման պայմաններում մասնագետից պահանջվում է ոչ միայն արագ և արդյունավետ արձագանքել, այլև ստեղծել վստահության և համագործակցության մթնոլորտ, ինչը նպաստում է իրավիճակի կայունացմանը:

Կանայք հաճախ ցուցաբերում են ապրումակցման բարձր մակարդակ, հաղորդակցման ճկունություն: Այս հատկությունները կարող են կարևոր դեր ունենալ այն իրավիճակներում, որտեղ անհրաժեշտ է նվազեցնել լարվածությունը, ապահովել արդյունավետ երկխոսություն և կանխել կոնֆլիկտների սրացումը:

Այս համատեքստում Կանանց միջազգային օրը հնարավորություն է ևս մեկ անգամ ընդգծելու այն մասնագիտական և մարդկային արժեքները, որոնք կանայք իրենց գործունեության մեջ բերում են ՆԳՆ համակարգ: Նրանց մասնակցությունը ոչ միայն նպաստում է ծառայության արդյունավետության բարձրացմանը, այլև կարևոր դեր է խաղում հասարակության անվտանգության ապահովման և հանրային վստահության ամրապնդման գործում:

Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի ավագ դասախոս Մ.Կարապետյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ ԴԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձրույց՝ մանկավարժության մասին



Մանկավարժության էության, դերի, մեթոդների մասին զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանում փրկարարական ամբիոնի պետ, բ.գ.թ., դոցենտ Աշխեն Ալբերտի խաչատրյանի հետ, ով, երկար տարիներ անմնացորդ նվիրումով գործի դնելով իր մասնագիտական հմտությունները, սովորողներին դասավանդում է «Առաջին բուժօգնություն», «Անվտանգություն և առաջին օգնություն», «Հրշեջ-փրկարարական աշխատանքներում առաջին օգնության ցուցաբերում», «Աղետների բժշկության կազմակերպում» առարկաները:

տություն է. մեկը ֆիզիկական առողջությունն է ապահովում, մյուսը՝ հոգևոր: Երկուսն էլ ճակատագրական են: Երբ ընտրեցիք այս մասնագիտությունը, Դուք գիտակցում էիք այդ առաքելությունն ստանձնելու բարդությունը:

- Հարգելի՛ Ելենա, ինչպես նշեցիք, և բժշկությունը, և՛ մանկավարժությունը միմյանց հետ փոխկապակցված են. երկուսն էլ ճակատագրական են և կարևոր գիտություններ են: Բժշկության ասպարեզում ես հավատարիմ եմ մնացել Հիպոկրատի երդմանը՝ այն, որ պետք է օգնեն հիվանդներին խղճիս համաձայն, որքան ներեն ուժերս՝ խուսափելով նրանց որևէ վնաս կամ չարիք պատճառելուց: Մանկավարժությունն անձի ձևավորման, կրթության և դաստիարակության մասին գիտություն է, որը, որպես մասնագիտություն, պահանջում է բարձրագույն կրթություն, հումանիզմ, սեր ուսանողների հանդեպ և ինքնա-

կատարելագործում. ներառում է ուսուցման մեթոդների մշակում, սոցիալականացում և հատուկ կրթական կարիքների հաղթահարում: Ժամանակակից մանկավարժը պետք է ունենա հոգեբանական, մեթոդական և ինքնաճանաչողական հմտություններ: Մանկավարժը ոչ միայն գիտելիք փոխանցող է, այլև դաստիարակ, ով ապահովում է անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Ժամանակակից մանկավարժության մեջ կարևորվում է նաև վերադաստիարակման խնդիրը, որը պահանջում է թափանցել սովորողի ներաշխարհ և գտնել նոր, ավելի արդյունավետ մոտիվացիայի մեթոդներ:

Վկարտել եմ Մ.Ֆերացու անվան պետական բժշկական համալսարանը, մասնագիտությամբ առողջապահության կազմակերպիչ եմ, ռազմական բժիշկ, 20 տարի ծառայել եմ ՀՀ զինված ուժերում և այդ տարիների ընթացքում կատարել եմ պարտքս մեր

երկրի, պետականության առջև: Երբ առաջին անգամ մտա լսարան (դա 1998 թվականն էր), հասկացա որ ես կարող եմ մոտիվացնել ուսանողներին, տիրապետել դասավանդման մեթոդաբանությանը և կրթել շատ-շատ սերունդներ:

Միշտ զբաղվել եմ իմ ինքնակրթությամբ, կատարելագործել եմ մասնագիտական գիտելիքներս և ձեռք բերել նոր որակավորումներ մանկավարժության, հոգեբանության և ներկա պահին արդեն փրկարարական գործում: 2025 թ. անցել եմ մրցութային գործընթաց և նշանակվել եմ փրկարարական ամբիոնի պետ, ինչը շատ պարտավորեցնող է: Իմ աշխատանքային գործունեության ընթացքում միշտ գիտակցել եմ մանկավարժության բնագավառում կարևոր առաքելությանս մասին, շնորհակալ եմ իմ ուսուցիչներին, ղեկավարներին, գործընկերներին՝ ինձ զնախառնելու և ընդունելու համար:



ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՍԿԶԲՈՒՄ՝ ՊԱՐԶԱՊԵՍ ՀՈԲԲԻ, ՀԵՏՈ՝ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից տեխնոլոգիաների արագ զարգացումն ստիպում է մեզ քայլել ժամանակի հետ և մշտապես կատարելագործվել: Այսօր նորարարությունները մեծ դեր են խաղում կյանքի զրեթե բոլոր ոլորտներում, և հատկապես կարևոր են այն մասնագիտությունները, որոնք ոչ միայն արդիական են, այլև պահանջված են լինելու ապագայում: Այդ պատճառով էս ընտրեցի անօդաչու թռչող սարքերի կիրառման հետ կապված մասնագիտությունը փրկարարական և որոնողական աշխատանքներում: Դեռևս 13-14 տարեկանում ես սկսեցի հետաքրքրվել դրոններով: Սկզբում դա պարզապես հոբբի էր, սակայն ժամանակի ընթացքում այն դարձավ իմ հետաքրքրությունների կարևոր մասը: Ես ուսումնասիրում էի, թե ինչպես են աշխատում դրոնները, ինչպես կարելի է դրանք կառավարել և ինչպիսիսի հնարավորություններ ունեն դրանք տարբեր ոլորտներում:

Երբ եկավ քոլեջ ընդունվելու ժամանակը, իմ ընտրությունը կանգ առավ ՃԿՊԸ քոլեջի վրա: Այս որոշման պատճառը պարզ է. ես սիրում եմ օգնել մարդկանց և միաժամանակ հետաքրքրված եմ ժամանակակից տեխնոլոգիաներով: Դրոնները մեծ դեր ունեն որոնողափրկարարական աշխատանքներում, քանի որ դրանք թույլ են տալիս արագ գտնել մարդկանց, ուսումնասիրել դժվար հասանելի տարածքներ և օպերատիվ արձագանքել արտակարգ իրավիճակներին: Համադրելով իմ հետաքրքրությունները և ցանկությունը՝ օգտակար լինել մարդկանց, ես ընտրեցի այս մասնագիտությունը՝ վստահ լինելով, որ այն ոչ միայն արդիական է, այլ նաև կարևոր կլինի ապագայում:

Մաքսիմ Ստեփանյան
ՓԾ և ՃԿ ուսումնական ստորաբաժանում, 3-րդ կուրս



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՆՈՋԵԲԱՆԱԿԱՆ, ՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՃԱՆԱՋՈՂԱԿԱՆ ՆՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3 ◀ - Ընտանիք, աշխատանք և առավել և՛ գիտական աշխատանք. ինչպե՞ս եք կարողանում համատեղել:

- Աշխատանքը և ընտանիքը մեր կյանքի ամենակարևոր մասն են կազմում, ընտանիքը կարևոր արժեք է և կարևոր ռեսուրսներ է պահանջում:

Ընտանիքը ևս կառուցողական աշխատանք է, աշխատանքը երբեմն բավականին ժամանակ ու էներգիա է պահանջում, սակայն ճիշտ կազմակերպած առօրյան թույլ է տալիս համատեղել: Ամենակարևորը, որ ընտանիքի անդամները հասկանում, գնահատում են և հարգանքով են վերաբերվում իմ ընտրած մասնագիտությանը:

Ընտանիքիս դերը բարձր են գնահատել հատկապես գիտական գործունեությանը զբաղվելու տարիներին, քանզի նրանք գիտակցել են, որ դասավանդող դասախոսի համար պարտադիր է նաև գիտական գործունեությունը: Դրան նպաստել և օգնել է նաև ամուսինս՝ հասկանալով, որ գիտությունը շատ կարևոր է իմ աշխատանքային գործընթացում: Գիտական գործունեություն սկսել եմ 2003 թվականից և 2008 թվականին պաշտպանել եմ գիտական թեզս: 2011 թվականին Բարձրագույն որակավորման հանձնաժողովի /ԲՈՎ/ կողմից ստացել եմ դոցենտի գիտական կոչում: Մինչ օրս զբաղվում եմ գիտությամբ՝ ունեմ հրատարակված 40 գիտական հոդված և 1 ուսումնական ձեռնարկ, մի քանի կրթական ոլորտների համար ներկայացրել եմ բազմաթիվ կրթական ծրագրեր:

- Ինչպե՞ս եք միաձուլում խստությունն ու կարգապահությունը դասը վարելու ինտերակտիվ մեթոդի հետ:

- Այն առարկաները, որոնք ես դասավանդում եմ, ուսանողների մեջ ձևավորում են գիտելիք, կարողություն, հմտություններ, վերջնական արդյունքներին հասնելու նպատակ: Դասապարտքները պետք է ուսանողի համար լինի մատչելի, հետաքրքիր, անցնի իրավիճակային խնդիրներ լուծելով, ժամանակակից միջազգային տեխնոլոգիաների չափորոշիչների համաձայն, գործիքակազմի կիրառմամբ, գործնական կարողությունների անցկացմամբ, որպեսզի ուսանողը մոտիվացվի և լիարժեք մասնակցի դասընթացին, այս բոլորը, անշուշտ, կնպաստեն ուսանողների ներգրավվածությանն ուսումնական պրոցեսին:

- Ինչպե՞ս պետք է լինի ուսանող - դասախոս հարաբերությունը:

- Կարծում եմ, որ ուսանող-դասախոս և ցանկացած միջանձնային և միջխմբային հարաբերությունները կարող են ճիշտ կառուցված և արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ հարաբերակցվող կողմերը հստակ պատկերացնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրականացման սահմանները և մեխանիզմները, որոնցով ղեկավարվելով նրանք կարգավորում են սեփական վարքագիծը, ղեկավարում սեփական ակտիվությունը և ուրիշի վարքն ու գործունեությունը: Դասախոսը պետք է լինի նաև հոգեբան, որպեսզի հասկանա ուսանողի ներաշխարհը:

- Որո՞նք են Ձեր ուժեղ և թույլ կողմերը:

- Բոլորն էլ ունեն ուժեղ և թույլ կողմեր, և ես էլ բացառություն չեմ, ուժեղ կողմերս են լավատեսությունը, համբերատարությունը, առողջուրողականությունը, ճկունությունը, բազմաֆունկցիոնալությունը, զգացմունքային բանականությունը, իսկ թույլ կողմս ինքնաքննադատությունն է, գուցե և չափից ավել...

- Որո՞նք են Ձեր հիմնական արժեքները՝ որպես մասնագետ և որպես մարդ:

- Որպես մասնագետ հիմնական արժեքներն են՝ պրոֆեսիոնալիզմը, ազնվությունը, կոմպետենտությունը, էթիկան, զարգացման ձգտումը, թիմային աշխատանքը, որոնք ապահովում են վստահություն և արդյունավետություն:

Որպես մարդ հիմնական արժեքներն են՝ արժանապատվությունը, ազնվությունը, պատասխանատվությունը, նվիրվածությունը, կարեկցանքը:

- Պատմե՛ք Ձեր կյանքի գլխավոր ձեռքբերման մասին:

- Իմ կյանքի գլխավոր ձեռքբերումն առաջին հերթին իմ ընտանիքն է, մասնագիտական կայացումը, արժեքների ձևավորումը:

- Ի՞նչը կփոխեիք կրթական համակարգում:

- Մասնագիտական կրթական ծրագրերի և ուսումնական ծրագրերի արդիականացում, համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին, կարողությունների, հմտությունների խորացում, վերապատրաստման գործընթացների ավելացում:

- Խոսե՛ք նախաիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով Ձեզ կտրում է իրական կյանքից:

- Հանգիստը, զբոսանքը,

երաժշտությունը, խոհանոցը:

- Թե՛մա, որի շուրջ անդադար կխոսեք:

- Ուսումնական պրոցես, բժշկություն և աշխատանք:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը Ձեզ համար:

- Ոգեշնչումը, բարությունը, աշխատանքը և մարդկանց օգնելու ձգտումը:

- Տիկին Խաչատրյան, տոնի առթիվ ի՞նչ կմտախոսեք մեր բազմաշարժար կյանքի:

- Հարգելի՛ կանայք, Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի առթիվ շնորհավորում եմ, մաղթում եմ ձեզ խաղաղություն, առողջություն, երջանկություն անձնական կյանքում և հաջողություններ բոլոր նախաձեռնություններում: Ընդհանրապես եմ նաև ներքին գործերի նախարարության համակարգում աշխատող և ծառայող բոլոր կանանց, մաղթում նոր ձեռքբերումներ գործունեության բոլոր ոլորտներում:

Բլից հարցեր

Պատասխանում եք կարճ և արագ:

- Երեք բառ, որով կընդրոշեք Ձեզ:

- Ազնիվ, աշխատասեր, մարդկանց հասկացող:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Յուրաքանչյուր օրվա գրաֆիկի ճիշտ կազմակերպումը:

- Օրն սկսում եք ժամը...

- Առավոտյան 07.00-ից:

- Սիրած աֆորիզմը:

- Իրական գեղեցկությունն ապրում է սրտում, արտացոլվում է աչքերում և արտահայտվում է գործողություններով: (Օշո)

Որտեղ ավարտվում է համբերությունը, սկսվում է տոկունությունը: (Կոնֆուցիոս)

- Սիրելի զբաղմունքը:

- Դասավանդում, ուսումնական պրոցես:

- Խորհուրդ, որը կտայիք:

- Եղեք նպատակասլաց, զբաղվեք ինքնազարգացմամբ, սփռեք բարություն:


- Իսկ վերջում.. (ավելացրե՛ք այն, ինչ Ձեր մտքով անցնում է այս պահին):

- Ընդհանրապես եմ հարցազրույցի համար, մաղթում եմ բոլորին բարություն:

Հարցազրույցը վարեց գիտական բաժնի մասնագետ Ելենա Չերնեցկայան

Ստեղծագործում են մերոնք

Քեզ եմ նվիրում



Քեզ եմ նվիրում... Գարնան գետերի հմայքը սիրուն, Կանաչ դաշտերի ծաղիկը նախշուն Եվ մով սարերի գեպիումը անուշ, Որ դեմքդ շոյեն մատներով քնքուշ:

Քեզ եմ նվիրում... Ամռան արևի շողքը ջերմագին, Մեղրաբույր շուրթիս համբույրը անգին, Խաղաղ գիշերվա անդորրը բարի, Որ ապրես գրկում մեր տաք հուշերի:

Քեզ եմ նվիրում... Աշման գույները՝ կարմիր, ծիրանի, Ծառերից ընկնող պարը տերևի, Ամպերից պոկված կաթիլն անձրևի, Որ արցունքն է իմ անհուն կարոտի:

ՀՀ ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Կարինե Կիրակոսյան

ՄԵԾԵՐԸ՝ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Կինը եթե սիրի, լեռան ծանրություն կարող է կրել իր հոգում:

Թոթովենց

Ով ընդունակ է կառավարել կնոջը, նա ընդունակ է կառավարել պետությունը:

Բալզակ

Երբ տղամարդն է կուրորեն խամդում, առաջին հերթին իր տունն է քանդում:

Բայրոն

Կանայք ատելության մեջ ավելի հաստատամիտ են, քան սիրո:

Պարոնյան

Սիրտը սիրուհուն է տալիս, աշխատավարձը՝ կնոջը, ստացած կաշառքը պահում է սև օրվա համար:

Ժողովրդական ասույթ

Կանայք նման են դիսերտացիաների. նրանք մույնպես պաշտպանության կարիք ունեն:

Բեռնարդ Շոու

Մերը մենամարտ է. չի կարելի այս ու այն կողմ նայել, այլ պետք է կրթվել:

Շիլլեր

Կնոջ մեջ բացի մարմնից պետք է փնտրել սիրտ, հոգի, խելք:

Դոստոևսկի

Կնոջ երկար լեզուն այն սանդուղքն է, որով տուն է մտնում դժբախտությունը:

Չինական ասացվածք

Տղամարդը և կինը երկու մոտաներ են, առանց որոնց մարդկային հոգու լարերը չեն տալիս ճիշտ և լրիվ ակորդ:

Տոլստոյ

ՏՐԱՍՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Ճանապարհային երթևեկության կանոններ

Պայծառ օր էր: Մի բեռնատար, ձի ու սայլակ, ինչպես նաև մոտոցիկլավարը լուսացույցի մոտ սպասում են կանաչ լույսի: Երբ լույսը փոխվում է և դեղին է դառնում, բեռնատարի վարորդն արագացնում է ընթացքը, ձին վախենում է և կծում մոտոցիկլավարի ականջը:

Վարձը՝ ո՞վ է այդ իրավիճակում խախտել ճանապարհային երթևեկության կանոնները:



Նախորդ համարում գետեղված հարցի պատասխանը՝

Եթե դատավորը որոշի, որ այս պնդումը ճիշտ է, ամբաստանյալը պետք է զնդակահարվի: Սակայն սա հակասում է պայմանին, քանի որ եթե պնդումը ճիշտ է, ամբաստանյալը պետք է կախաղան բարձրացվի:

Եթե դատավորը գտնի, որ հայտարարությունը կեղծ է, ամբաստանյալը պետք է կախաղան բարձրացվի: Սակայն սա հակասում է որոշմանը, քանի որ հայտարարության կեղծ լինելը նշանակում է, որ ամբաստանյալը պետք է զնդակահարվի:

Պարադոքսն առաջանում է, քանի որ դատավորի ընտրած ցանկացած տարբերակ հանգեցնում է հակասության: Այս պարադոքսը նշանակում է, որ դատավորը չի կարող տրամաբանորեն որոշել՝ արդյոք պնդումը ճիշտ է, թե սխալ՝ առանց ինքն իրեն հակասելու:

Հետևաբար, դատավորը պետք է խնայի ամբաստանյալի կյանքը: